

# Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՓՈՒՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդատու,  
գումարված Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհրդի կողմից և հավաքված  
Ժնևում 1925թ. մայիսի 19-ին իր յոթերորդ նստաշրջանին, և  
որոշում

կայացնելով մասնագիտական հիվանդությունների համար աշխատողներին փոխհատուցելու մա  
սին որոշ առաջարկություններ ընդունելու վերաբերյալ, որը հանդիսանում է նստաշրջանի  
օրակարգի առաջին կետը,

որոշելով, որ այդ առաջարկությունները պետք է ունենան միջազգային կոնվենցիայի ձև,  
հազար ինը հարյուր քսանհինգ թվականի հունիսի տասին ընդունում է սույն Կոնվենցիան,  
որը կարող է անվանվել Աշխատողների փոխհատուցման (մասնագիտական հիվանդություններ)  
1925թ. Կոնվենցիա, և որը ենթակա է վավերացման Աշխատանքի միջազգային կազմակերպության  
անդամների կողմից՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության  
համապատասխան:

### Հոդված 1

1. Սույն Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության  
յուրաքանչյուր անդամ պարտավորվում է մասնագիտական հիվանդության հետևանքով  
անաշխատունակ դարձած անձանց կամ այդ հիվանդություններից մահվան դեպքում ապահովել  
նրանց խնամքի տակ գտնվող անձանց փոխհատուցումը՝ արտադրական  
պատահարների փոխհատուցման վերաբերյալ ազգային օրենսդրության ընդհանուր  
սկզբունքներին համապատասխան:

2. Այդպիսի փոխհատուցման չափը չի կարող ցածր լինել օրենսդրությամբ նախատեսված  
արտադրական պատահարների հետևանքով ստացած խեղման համար  
նախատեսված փոխհատուցման գումարի չափից: Այս դրույթին համապատասխան  
Կազմակերպության յուրաքանչյուր անդամ իր  
օրենսդրությամբ մասնագիտական հիվանդությունների փոխհատուցումը կարգավորող  
պայմաններ սահմանելիս և այդ հիվանդությունների նկատմամբ արտադրական պատահարների  
վերաբերյալ օրենսդրությունը կիրառելիս կարող է ըստ անհրաժեշտության կատարել  
փոփոխություններ և համապատասխանեցումներ:

### Հոդված 2

Սույն Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության  
յուրաքանչյուր անդամ պարտավորվում է մասնագիտական հիվանդություններ համարել այն  
հիվանդությունները և թունավորումները, որոնք առաջանում են կցված ներքոհիշյալ աղյուսակում  
նշված նյութերից, երբ այդպիսի հիվանդությունները կամ թունավորումները ազդում են  
վերոհիշյալ աղյուսակում համապատասխանաբար նշված առևտրի և արտադրության ճյուղերում  
զբաղված աշխատողների վրա և համարվում են օրենսդրությամբ նախատեսված  
արտադրություններում աշխատանքի հետևանք:

Աղյուսակ

Հիվանդությունների և թունավոր նյութերի ցուցակ	Համապատասխան գործունեության տեսակների և արտադրության ճյուղերի ցուցակ
---	---

<p>Թունավորում կապարով, դրա համաձուլվածքներով կամ միացություններով՝ թունավորման ուղղակի հետևանքներով:</p>	<p>Շփում կապար պարունակող հանքանյութի հետ, այդ թվում կապարի փոշու հետ ցինկի գործարաններում:  Երկրորդային ցինկի և կապարի ձողերի ձուլում:  Կապարից կամ կապարային համաձուլվածքներից դետալների արտադրություն:  Աշխատանք տպագրական (պոլիգրաֆիական) արտադրությունում:  Կապարի միացությունների արտադրություն:  Մարտկոցների արտադրություն և վերանորոգում:  Կապար պարունակող արձնի պատրաստում և օգտագործում:  Ողորկում կապարի փոշով կամ կապար պարունակող փոշով:  Ներկման աշխատանքներ, ներառյալ հիմնաներկման նյութերի, ներկերի և մոմածեփի պատրաստումը և օգտագործումը, որոնք պարունակում են չոր կապարային ներկ:</p>
<p>Թունավորում սնդիկով, նրա համաձուլվածքներով և միացություններով՝ թունավորման ուղղակի հետևանքներով:</p>	<p>Մնդիկ պարունակող հանքանյութի մշակում:  Մնդիկային միացությունների արտադրություն:  Չափիչ և լաբորատոր սարքավորումների արտադրություն:  Բոլորագլխարկի արտադրության համար հումքի պատրաստում  Տաք ոսկեջրում:  Շիկացման լամպերի արտադրության համար սնդիկային պոմպերի օգտագործում:  Շառայուն սնդիկի պատիճների արտադրություն:</p>
<p>Սիբիրյան խոցով վարակում:</p>	<p>Սիբիրյան խոցով հիվանդ կենդանիների հետ շփումների հետ կապված աշխատանք:  Այդպիսի կենդանիների մսեղիքի կամ մսեղիքի մասերի մշակում՝ ներառյալ մորթիները, կոտոջները և սմբակները:  Ապրանքների բեռնում, բեռնաթափում և տեղափոխում:</p>

### Հոդված 3

Սույն Կոնվենցիայի վավերագրերը գրանցման նպատակով, Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան, ներկայացվում են Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին:

### Հոդված 4

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Աշխատանքի միջազգային կազմակերպության երկու անդամների վավերագրերը Գլխավոր տնօրենի կողմից գրանցվելու օրվանից:

2. Սույն Կոնվենցիան պարտադիր է Կազմակերպության միայն այն անդամների համար, որոնց վավերագրերը գրանցված են Աշխատանքի միջազգային բյուրոյում:

3. Կազմակերպության յուրաքանչյուր անդամի նկատմամբ հետագայում սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Աշխատանքի միջազգային բյուրոյում վավերագիրը գրանցելու օրվանից:

### Հոդված 5

Երբ Աշխատանքի միջազգային կազմակերպության երկու անդամների վավերագրերը Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից գրանցվում են Աշխատանքի միջազգային բյուրոյում, Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենը Աշխատանքի միջազգային կազմակերպության բոլոր անդամներին ծանուցում է այդ մասին: Նա նաև ծանուցում է նրանց կազմակերպության մյուս անդամներից հետագայում ստացված վավերագրերի գրանցման մասին:

#### **Հոդված 6**

4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր անդամ համաձայնում է կիրառել 1-ին և 2-րդ հոդվածների դրույթները ոչ ուշ, քան մինչև 1927թ. հունվարի 1-ը, և դրանց արդյունավետ իրականացման համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

#### **Հոդված 7**

Սույն Կոնվենցիան վավերացնող Աշխատանքի միջազգային կազմակերպության յուրաքանչյուր անդամ պարտավորվում է այն կիրառել իր գաղութներում, տիրույթներում և հովանավորյալ տարածքներում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության կանոնադրության 35-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

#### **Հոդված 8**

Սույն Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր անդամ կարող է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած հնգամյա ժամկետը լրանալուց հետո այն չեղյալ հայտարարել՝ Աշխատանքի միջազգային բյուրոյի Գլխավոր տնօրենին գրանցման նպատակով այդ մասին ակտ ներկայացնելու միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Աշխատանքի միջազգային բյուրոյի կողմից չեղյալ հայտարարելու մասին ակտի գրանցումից մեկ տարի հետո:

#### **Հոդված 9**

Աշխատանքի միջազգային Բյուրոյի Վարչական խորհուրդը, երբ անհրաժեշտ է, Գլխավոր խորհրդաժողովին զեկույց է ներկայացնում սույն Կոնվենցիայի կիրառման մասին և քննարկում է խորհրդաժողովի օրակարգում դրա լրիվ կամ մասնակի վերանայման հարցի ընդգրկման նպատակահարմարությունը:

#### **Հոդված 10**

Սույն Կոնվենցիայի անգլերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են:

*Ուժի մեջ է մտել 2005թ. մայիսի 18-ին*